ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 520 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 677-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ ապագա» ծրագրի մասին» N 677-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նեքսթ լեվել գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08286722) 2026 թվականի հունիսի 30-ին կնքված՝ N 127/26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընկերակցության Աշտարակի կենտրոնում վերանորոգման և հարդարման լրացուցիչ շինարարական աշխատանքների իրականացում՝ 7,917,194 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Էլիտբաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01242623) 2026 թվականի հունիսի 25-ին կնքված՝ N 123/26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 3,723,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Նեռա պրոջեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00242022) 2026 թվականի հուլիսի 8-ին կնքված՝ N 132/26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընկերակցության նկարների ցուցասրահի համար կահույքի մատակարարում՝ 12,778,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

13.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ